## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ԿԱՀԻՐԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆ-ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱ-ՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 10 հուլիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 , 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային բնագավառում համագործակցության եւ փոխադարձ աջակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահ Ա. Ավետիսյանի

գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի ապրիլի 15-ին՝ Կաhիրեում:

Համաձայնագրի նպատակն է բեռների, ուղեւորների փոխադրումների եւ փոստային առաքումների մաքսային հսկողության պարզեցումը եւ հսկողության մեթոդների կատարելագործումը, ինչպես նաեւ մաքսային ապօրինի գործունեության կանխարգելումը:

**2.** Համաձայնագիրը նախատեսում է մաքսային տարածքներով փոխադրում-ներն իրականացնել Կողմերի օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաեւ ճանաչել միմյանց մաքսային փաստաթղթերը, նույնականացման միջոցները եւ պաշտոնական այլ նշանները:

Համաձայնագրի շուրջ ծագած վիճելի հարցերը կկարգավորվեն մաքսային ծառայությունների բանակցությունների միջոցով:

**3.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է, մասնավորապես.

- հատուցել տեղափոխման ընթացքում տարանցիկ բեռների պակասելու, դրանց հասցված վնասների եւ ցանկացած այլ խախտումների համար,

- չպահանջել համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացած ծախսերի հատուցում,

- անհրաժեշտության դեպքում հոգալ պետական պաշտոնյաներ չհանդիսացող փորձագետների, վկաների եւ թարգմանիչների ծախսերը եւ վճարները,

- մաքսային հսկողություն իրականացրած մարմնի մերժած ապրանքները վերաարտահանել մյուս Կողմի տարածք,

- համագործակցել մաքսանենգությունը եւ մաքսային իրավախախտումները կանխարգելելու եւ հետաքննելու ուղղությամբ,

- լիազորել իր պաշտոնատար անձանց մյուս Կողմի տարածքում հանդես գալ որպես փորձագետ կամ վկա դատական կամ վարչական վարույթում,

- անհրաժեշտության դեպքում կիրառել թմրանյութերի եւ հոգեներգործուն նյութերի «Վերահսկելի մատակարարում» մեթոդը,

- համագործակցել մշակութային արժեքների ապօրինի ներմուծման կամ արտահանման դեմ պայքարի ոլորտում,

- միմյանց տրամադրել տեղեկատվություն մաքսային հարցերի վերաբերյալ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2007 թվականի ապրիլի 15-ին Կահիրեում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջեւ մաքսային բնագավառում համագործակցության եւ փոխադարձ աջակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 հուլիսի 2007 թվականի
ՍԴՈ-707